C. E. P. F. A.

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ No. 30

25.12.2025



Բարձրացնում ենք էկո մտածողությունը

Գիտության շաբաթ. Հայաստան 2025 փառատոնի շրջանակներում ՍԵՊՖԱ-ի էկոակումբի անդամներն ու «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության առաջին կուրսի ուսանողները այցելեցին Երևանի բուսաբանական այգի: Այցի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան գտնվելու էկո էպիկենտրոնում, ինչպես նաև ծանոթանալու բուսաբանական այգու տարածքում գործող թանգարաններին:



Ուսանողներին ուղեկցում էին «Էկոլոգիա»և «Կենսաբանություն» առարկաների դասախոս Ն. Աբազյանը, Կարիերայի կենտրոնի պատասխանատու Ա. Ստեփանյանը և հոգեբան Ա. Ասլանյանը:



Ավելի ուշ ՍԵՊՖԱ-ի Ուսանողական խորհրդի և էկոակումբի նախաձեռնությամբ ուսանողները մասնակցեցին ծառատունկի՝ «Ջրվեժ» անտառպարկում:

Բնապահպանական այս նախաձեռնությունը միտված էր ոչ միայն շրջակա միջավայրի բարելավմանը, այլև էկոլոգիական գիտակցության ձևավորմանն ու խթանմանը երիտասարդների շրջանում:

ՍԵՊՖԱ-ն EfVET 2025-ում. բարեկեցություն և թվայնացում ՄԿՈՒ ոլորտում

ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը և տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ելենա Մարտիրոսյանը Պորտուգալիայի Ֆատիմա քաղաքում մասնակցեցին EfVET (Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական ֆորում) 2025 թվականի տարեկան համաժողովին, որը կրում էր «Բարեկեցություն թվայնացված աշխարհում. կերտենք 2035-ի ՄԿՈՒ ապագան» կարգախոսը:

Թվային փոխակերպումը ստեղծում է արդյունավետության, ճկունության և նորարարության բազմաթիվ հնարավորություններ, միևնույն ժամանակ նաև նոր մարտահրավերներ, հատկապես՝ ուսանողների, դասախոսների և ղեկավարների բարեկեցության ապահովման առումով:



Պորտուգալիա կատարած այցի ընթացքում ՍԵՊՖԱ-ի ղեկավար կազմի ներկայացուցիչները այցելեցին Լիսաբոնի Առևտրի քոլեջ:

Ուսանողների և դասախոսների ուղեկցությամբ պատվիրակության անդամները շրջայց կատարեցին քոլեջում, ծանոթացան կրթական ծրագրերին և ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին համագործակցության հնարավոր ուղղություններն ու փորձի փոխանակման նախաձեռնությունները:

Ֆրանսիացի ճարտարապետները և ուսանողները՝ ՍԵՊՖԱ-ում

Լիոնի Մետրոպոլի և Երևանի քաղաքապետարանի միջև ձևավորված համագործակցության շրջանակում ՍԵՊՖԱ-ն այս անգամ հյուրընկալեց Լիոնի Բարձրագույն ճարտարապետական դպրոցի (ENSAL) դասախոսներից և ուսանողներից կազմված աշխատանքային խմբին: Այցն իրականացվում է Լիոնի Բարձրագույն ճարտարապետական դպրոցի (ENSAL) և Հայաստանի ազգային ճարտարապետության և շինարարության համալսարանի (ՀԱՃՇՀ / UNACA) միջև գործող միջհամալսարանական աշխատարանի շրջանակում:



Ծրագրի ընթացքում ուսանողները իրականացնում են քաղաքաշինական ուսումնասիրություններ՝ նպատակ ունենալով համատեղ կրթական և հետազոտական փորձի փոխանակում: Այս միջհամալսարանական համագործակցությունը մաս է կազմում Լիոն և Երևան քաղաքների միջև ձևավորված գործընկերության:

IMPROVET_AM. նոր համագործակցություններ բժշկական կրթության ոլորտում



Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի շրջանակում ՍԵՊՖԱ-ի և իտալական ԱՊՐՈ Ֆորմացիոնե ուսումնական կենտրոնի մասնագետները այցելեցին Արարատի պետական բժշկական քոլեջ՝ ներկայացնելու IMPROVET_AM ծրագիրը, ծանոթանալու քոլեջի գործունեությանը և քննարկելու հետագա համագործակցության հնարավոր ուղղությունները:
Նույն ծրագրի շրջանակում ՍԵՊՖԱ-ի «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության դասախոս Լիլիթ Պապյանը և հոգեբան Աշխեն Ասլանյանը մասնակցեցին ԱՊՐՈ Ֆորմացիոնեի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացին, որը անցկացվեց Գյումրու պետական բժշկական քոլեջում և նպատակ ուներ ներկայացնելու անձնական խնամքի օգնականների/սանիտարական անձնակազմի պատրաստման էությունը:



Դասընթացի թեմաներն ընդգրկում էին ծանր հիվանդների խնամքն ու տեղափոխումը, հիվանդ-սանիտարական անձնակազմ հաղորդակցությունը, առողջապահության ոլորտում հիգիենիկ և էթիկայի նորմերը, ինչպես նաև ներառականության խթանումը կրթական գործընթացում:

Հայաստանի համերը՝ զբոսաշրջության զարգացման առանցքում



Լիոնի ՍԵՊՈ կամպուսը և ՍԵՊՖԱ-ն համատեղ իրականացնում են «Տուրիզմի ապագա մասնագետների պատրաստման նախագիծ՝ աջակցելու Հայաստանի տնտեսական զարգացմանը» ծրագիրը, որը համաֆինանսավորվում է Ֆրանսիայի Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության կողմից: Ծրագրի նպատակն է կայուն զբոսաշրջությունն ու հայկական տեղական խոհարարական ժառանգությունը վերածել տարածքային գրավչության,



ինչպես նաև մշակութային և տնտեսական արդյունավետ գործիքների:Նախաձեռնությունը կենտրոնացած է հյուրատների զարգացման վրա՝ ներառելով ուսուցման նոր մոդուլներ, որոնք մշակված են յուրաքանչյուր տարածաշրջանի առանձնահատկություններին համապատասխան՝ արժևորելով տեղական բաղադրատոմսերը, ավանդությները և յուրահատուկ խոհարարական ինքնությունը: Այցելուները հնարավորություն կունենան բացահայտելու Հայաստանը հենց նրա համերով ու պատմություններով:Ծրագրի իրականացման շրջանակում Սյունիքի մարզում իրականացվել է մոնիթորինգային այց՝ ՍԵՊՌ-ի խոհարարության և սպասարկման ոլորտի փորձագետներ Ժան-Ֆրանսուա Ժյուլիայի և Քրիստոֆ Չիոնի մասնակցությամբ:

Մոտիվացիոն հանդիպում ՍԵՊՖԱ-ում

C2IM արդյունաբերական աքսելերատորի գլխավոր տնօրեն և «Diaspora Arménienne du Grand Est» ասոցիացիայի նախագահ պարոն Անդրե Ներսիեն, ով գտնվում էր Հայաստանում, հանդիպեց ՍԵՊՖԱ-ի ուսանողների հետ Հանդիպման ընթացքում Անդրե Ներսիեն ներկայացրեց իր մասնագիտական ուղին՝ընդգծելով աշխատասիրության, հաստատակամության և շարունակական զարգացման կարևորությունը: Նա հատուկ անդրադարձավ նաև ֆրանսերեն լեզվի դերին՝ այն դիտարկելով որպես միջազգային հնարավորությունների և արդյունավետ համագործակցության կարևոր միջոց: Պարոն Ներսիեին ուղեկցում էին «Œuvre d'Orient» կազմակերպության Հայաստանի տնօրեն տիկին Բլանդին Բուրոն և ԿԱՀԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամի ներկայացուցիչները:



Մասնագիտական հանդիպում և լեզվական կամուրջներ

ՍԵՊՖԱ-ում հյուրընկալեցինք Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հագուստի մոդելավորում» մասնագիտության առաջին կուրսի ուսանողներին՝ ֆրանսերենի դասախոս Գայանե Հայրապետյանի գլխավորությամբ: Այցի ընթացքում հյուրերը շրջայց կատարեցին ՍԵՊՖԱ-



ում, ծանոթացան դասավանդվող մասնագիտական ուղղություններին և մասնագիտական հետաքրքիր փոխանակումներ ունեցան «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության ուսանողների հետ: Ուսանողները հանդիպեցին նաև միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցած ՍԵՊՖԱ-ի ուսանողների և շրջանավարտների հետ՝ լսելով նրանց փորձառությունների ու հաջողությունների պատմությունները: Այցի հիմնական նպատակն էր ներկայացնել և ընդգծել ֆրանսերեն լեզվի ուսուցման կարևորությունը մասնագիտական կրթության և ուսուցման հաստատություններում:

Էկոտուրիզմի զարգացման հնարավորությունները Վանաձորում

Ֆրանսիական «ԱՖՐԱՏ» ընկերության կամավորները՝ «Հայաստանի արահետներ» ծրագրի երիտասարդների հետ աշխատանքների համակարգող Անուշ Ստեփանյանի ուղեկցությամբ, այցելեցին Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ: Այցի շրջանակում



նրանք հանդիպում ունեցան քոլեջի տնօրեն Տիգրան Թադևոսյանի հետ, ապա շրջայց կատարեցին քոլեջում՝ ծանոթանալով գործող մասնագիտություններին: Այնուհետև «Զբոսաշրջություն» մասնագիտության դասախոսների հետ քննարկվեցին Վանաձորում էկոտուրիզմի զարգացման հնարավորությունները: Քննարկումների ընթացքում անդրադարձ կատարվեց անհրաժեշտ ռեսուրսներին, ինչպես նաև մանկավարժական այն գործիքներին ու մեթոդներին, որոնք կարող են նպաստել տարածաշրջանում էկոտուրիզմի խթանմանը հաստատություններում:

ԿԱՊԿ գնահատում. փորձի փոխանակում

ՍԵՊՖԱ-ի դասավանդող անձնակազմը մասնակցեց Երևանի №4 տարածքային մանկավարժահոգեբանական



աջակցման կենտրոնի կողմից կազմակերպված «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների/ ԿԱՊԿՈՒ/ գնահատման վերաբերյալ տեղեկատվության փոխանակում» թեմայով սեմինարին:Սեմինարը մասնակիցներին հնարավորություն ընձեռեց քննարկելու լավագույն փորձը և կիսվելու ոլորտում առկա արժեքավոր տեղեկատվությամբ:

ՍԵՊՖԱ-ի շրջանավարտը ներկայացնում է «Նորաձևության տեխնոլոգիա» ուղղությունը



ՍԵՊՖԱ-ի «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության շրջանավարտ Լուիզա Զաքարյանը «Հայաստանի Հմտություններ 2025» մրցույթում զբաղեցրել է առաջին պատվավոր հորիզոնականը՝ «Նորաձևության տեխնոլոգիա» ուղղությամբ:
Նշենք, որ նախորդ տարի միջազգային մրցույթին մասնակցել է ՍԵՊՖԱ-ի շրջանավարտ Միրա Ներսիսյանը՝ արժանանալով «Best of Nation» մրցանակին:
Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում միջազգային մրցույթների կազմակերպման առաջատար կառույցը «Աշխարհի հմտություններ» կազմակերպությունն է, որին ներկայումս անդամակցում են 89 երկիր և տարածաշրջան: Հայաստանը «Աշխարհի հմտություններ» միջազգային կազմակերպության անդամ է դարձել 2012 թվականից, որտեղ մեր երկիրը ներկայացնում է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը:

Հաջողության պատմություն ՍԵՊՖԱ-ում

Կարիերայի կենտրոնի պատասխանատու Անուշ Ստեփանյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ՍԵՊՖԱ-ի «Խոհարարական գործ» մասնագիտության շրջանավարտ, ԼԵՕ սրճարանի հիմնադիր Լևոն Մարտիրոսյանի հանդիպումը խոհարար և հրուշակագործ ուսանողների հետ:
Հանդիպման ընթացքում Լևոն Մարտիրոսյանը ներկայացրեց իր ուսանողական տարիների հիշարժան փորձառությունները, խոհարարության ոլորտում ձեռք բերած մասնագիտական հաջողությունները և ձեռներեցական գործունեության կայացման ճանապարհը: Նա ընդգծեց ՍԵՊՖԱ-ի հետ ունեցած շարունակական կա-



պը և մասնագիտական կրթության նշանակալի դերը իր մասնագիտական ձևավորման գործում: Հանդիպման ավարտին Լևոն Մարտիրոսյանը հաճելի անակնկալ մատուցեց ներկաներին՝ նվիրելով զեղչային քարտեր իր սրճարանից օգտվելու համար, ինչպես նաև նմանատիպ քարտեր փոխանցելով ՍԵՊՖԱ-ի ողջ աշխատակազմին և ուսանողներին:

Էկո քայլարշավ «Հրեշտակների կիրճ»-ում



Հայաստանի արահետներ ծրագրի շրջանակում ֆրանսիացի կամավորները և ՍԵՊՖԱ-ի էկոակումբի անդամները իրականացրին քայլարշավ Վեդի քաղաքից ոչ հեռու գտնվող «Հրեշտակների կիրճ» բնական հուշարձանում: Քայլարշավը հնարավորություն տրվեց ուսանողների հետ ուսումնասիրելու տարածքում հանդիպող թռչունների բազմազանությունը և քննարկելու նրանց վարքային առանձնահատկությունները: Նախաձեռնությունը միտված էր էկոտուրիզմի և բնապահպանական մտածողության խթանմանը:

Առաջին օգնություն՝ կյանք փրկող գիտելիքներ



Հինղեկ Գոհար Կզլյանի և «Առաջին օգնություն» մոդուլի դասախոս Լիլիթ Պապյանի նախաձեռնությամբ ՍԵՊՖԱ-ում անցկացվեց համատեղ դաս՝ «Առաջին օգնություն մարտի դաշտում, առօրյա կյանքում, էքսկուրսիաների և արշավների ժամանակ» թեմայով: Դասի ընթացքում առաջին կուրսի ուսանողները ծանոթացան առաջին օգնություն ցուցաբերելու հիմնական կանոններին, անհրաժեշտ քայլերին՝ մինչև մասնագետի օգնությունը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում արագ և ճիշտ արձագանքելու հմտություններին՝ պատահարների և վնասվածքների դեպքում:

Շնորհակալագրեր ՍԵՊՖԱ-ի կամավոր ուսանողներին

Կամավորի միջազգային օրվա առթիվ ՍԵՊՖԱ-ում տեղի ունեցավ կամավորական գործունեությանը նվիրված միջոցառում, որի ընթացքում կամավորական աշխատանքներում ակտիվ մասնակցություն ունեցած ուսանողները պարգևատրվեցին շնորհակալագրերով:



Շնորհակալագրերը ուսանողներին հանձնեց ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը՝ կարեվորելով երիտասարդների ներգրավվածությունն ու նվիրվածությունը հասարակական, կրթական և սոցիալական նախաձեռնություններին: Իր խոսքում տնօրենը ընդգծեց, որ կամավորությունը պարզապես գործունեություն չէ, այլ արժեքային համակարգ՝ ժամանակի, էներգիայի և սիրո նվիրում համայնքին ու հասարակությանը:

ՍԵՊՖԱ-ն՝ «Տարեհաց» ամանորյա տոնավաճառում



ՀՀ ԿԳՄՍ նախարարության և որոշ կազմակերպությունների աջակցությամբ համատեղ կազմակերպված «Նոր տարվա տոնավաճառ 2025-2026» միջոցառման շրջանակում անցկացված «Տարեհաց» ամանորյա ուտեստի տոնավաճառին մասնակցեց նաև ՍԵՊՖԱ-ն: Միջոցառումը միտված էր հայկական ավանդական խոհարարական ժառանգության ներկայացմանը և ամանորյա սովորույթների արժևորմանը: Հարկ է նշել, որ դեկտեմբեր ամ-սին ՍԵՊՖԱ-ն հնարավարու-թյուն ունեցավ մասնակցելու Մասիս քաղաքում կազմակերպված Ֆրանկոֆոն Սուրբ Ծննդյան տոնավաճառին, որտեղ ներկայացրեց ֆրանսիական տոնական սեղանի յուրահատկությունները: